մէջ կայ մի լաւ տրամադրութիւն, եթէ կուզէք, մի բնական վախ, թէ՝ չը լինի՞ մեծ տօնը չլատմամբ կորցնի իր համազգային լինելը. և այդ վախն է, որ նրան բերում յանգում է մի խելացի եզրակացութեան. „գործը պէտք է այնպէս տակտով տանել, որ հնարաւոր չափերով քիչ մարմիններ դժգոհ մնան…"

Եւ այս ցանկութեանը չէ, որ «Հորիզոն»-ը պիտի դիմադրէ. ընդհակառակը, „Հորիզոն"-ի բռնած դիրքով վաղուց ի վեր չափազանց պարզ է եղած, որոշ և կորեկտ. Նրա միակ ցանկութիւնն էլ հէնց այն է, որ ոչ միայն „քիչ մարմիններ դժգոհ մնան", այլ բնաւ դժգոհներ չլինեն և դրա համար «Հորիզոնը» բազմիցս անգամ կրկնել է իր էջերից և կրկնում է ներկայումս, թէ՝ էջմիածինը մեծ տօնը համազգային դարձնելու համար պարտաւոր է խնդիրը խաղաղ, և որ գլխաւորն է, խելացի ճանապարհով վճռել, իսկ դրա համար, նա պիտի թողնի իր ինքնակալ դիրքը և յարգի նաև ժողովրդական տարրերի ձայնը, մի ձայն՝ որը աւելի շուտ է հնչել, քան թէ իրեն էջմիածինը։

Այդ ձևով միայն էջմիածնի յոբելեանական Յանձնախումբը կարող կը լինի հարթել իր իսկ ձեռքով ստեղծած կնճիռը։

Ա. Ղազարեան

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

Անցեալ անգամ քննութեան առանք երբ տօնելու հարցը, այս անգամ խօսելու ենք տօնը ինչպէս յաւերժացնելու խնդրի մասին։ Այս հարցը ևս վիճելի է. Էջմիածնի Յանձնաժողովը որոշել է կազմել «Դպրոցական ֆոնդ», իսկ Թիֆլիզը „գրական ֆոնդ". Այս կէտի պատճառաւ պ. Տէրվանդաղէն կծու և վիրաւորական դարձւածքներով յարձակւեց էջմիածնի Յանձնաժողովի վրայ։ Զարմանալի տխուր գոյներով էր նկարագրւած էջմիածնի Յանձնաժողովը նրա յօդւածում. բանից դուրս է գալիս, որ այնտեղ նստողները չեն հասկանում, թէ ինչ է գրականութիւնը և յարգանք չունին դէպի նա։

Նախ սկսենք այս վերջին կէտից և յետոյ աստիճանաբար կանցնենք միւս հարցերին։ Ճի՞շտ է իսկապէս պ. Տէրվանդաղէի դատողութիւնը. եթէ նա մի փոքր պաղարիւն լինէր, կը տեսնէր, որ էջմիածնի Յանձրաժողովի անդամները հին կամ նոր գրականագէտներ են, շատ կամ քիչ չափերով աշխատել են հայոց գրականութեան հարստացման համար, սիրում են գրականութիւնը, գիտեն նրա մեծ արժէքը և ոգևորւում են նրանով։ Ճիշտ է էջմիածնի Յանձնաժողովի մէջ չկան գեղեցիկ գրականութեան ներկայացուցիչներ, սակայն գրականութիւնը գրականութիւն է. գիտական-մանկավարժական խնդիրների մասին գրողը այնքան գրականագէտ է, որքան մի վէպ կամ դրամա գրողը։ Սխալ է մեղադրել էջմիածնի Յանձնաժողովի անդամներին գրականութիւնը չսիրելու կամ չյարգելու մէջ միմիայն այն պատճառով, որ նրանք հէնց իրենց սիրելի զբաղմունքներից մէկի պաշտպանութիւնից աւելի այժմէական են ընդունել մի այլ կազմակերպութեան պաշտպանութիւն, մանաւանդ որ գրականութիւնը պաշտպանութիւն էր գտել Թիֆլիզի Յանձնաժողովի կողմից։

Իբրև այդ Յանձնաժողովի անդամ ցոյց տամ այժմ, թէ ես ինչ պատճառաբանութիւններով ձայն տւի յօգուտ դպրոցական ֆոնդի։

Մի ժողովրդի կարիքները զանազան ժամանակներ տարբեր են լինում. մէկ անգամ կարիք է ունենում այդ ժողովուրդը ստեղծագործական աշխատանքի մի այլ անգամ ստեղծագործածը տարածելու աշխատանքի։ Երկուսն էլ մեծ կարիքներ են. պէտք է գիտել ժամանակի դրութիւնը. որպէսզի հասկացւի, թէ ժողովուրդը այս ինչ մոմենտում ինչ մեծ կարիքի մէջ է և որքան պէտք է բաւարարութիւն տալ։ Մեր ժողովուրդը տգէտ է, իրաւազուրկ, իր սօցիալական պարտականութիւնները չզգացող. ժողովրդի մի շատ չնչին տոկոսն է գրագէտ, այդ գրագէտների մի զգալի մասը նոյն իսկ հասարակ ընթերցանութեան գրքեր և լրագրներ չեն կարող կարդալ։ Գրագիտութեան տեսակէտից, կարծեմ, մենք յետ ենք մնում մեր դրացիներից։ Գրականութիւնը, գիտութիւնը չի զարգանում, որովհետև ընթերցողների շուկայ չկայ, հայ գրքերը, ինչպէս ասում են հէնց հայկական յայտնի գործիչներից շատերը, իբրև թուղթ փութերով ծախելու համար է տպւած։ Գանգատւում են այս դրութիւնից ուսուցիչները, հեղինակները, հասարակական միւս գործիչները և մանաւանդ մամուլը։ Տասնեակ տարիներ է ինչ լսում է այս գանգատները և վերջը. ոչինչ. էլի այն ջուրը և էլի այն ջաղացը։ Դրութիւնը համարեա նոյնն է, շատ չնչին բան է փոխւել, սակայն էլի ու էլի կրկնում —կրկնում ենք հին գանգատները, նոյն իսկ շատ անգամ գիտկցելով, որ այդ բոլորը անում ենք սովորութեան հիման վրայ։ Գիտութիւնը, գրականութիւնը, կուլտուրական միւս արժէքները չեն մտնում հայ ժողովրդի լայն խաւերը, որովհետև չկան այն կազմակերպութիւնները, որոնք կոչւած են հէնց այդ պարտականութեան համար։ Կարելի է առարկել, որ նախ պէտք է գրականութիւնը ծաղկեցնել և յետոյ դպրոցի մասին մտածել։ Կարող եմ պնդել, որ մեր գրականութիւնը այնքան զարգացած է, որ նրա վրայ կարող է հիմնել մի ժողովրդական դպրոց իր կուլտուրական ծրագրով։ Ներկայ մոմենտում մեզ պակասում է կուլտուրական արժէքների տարածման խնդիրը աւելի մեծ չափով։

Մտնում ենք հայ ընտանիքը, անցնում ենք փողոցներով հայերէն լեզուն բացառիկ դէպքերում կարող էք լսել, լեզուն դուրս է գալիս գործածութիւնից. նոյն իսկ ցած դասերն անգամ մեծ տենդենց են ցոյց տալիս նմանւելու այսպէս կոչւած բարձր դասակարգին։ Գրականութիւնը մենակ չի կարողանում պատնէշ կանգնել այդ վտանգաւոր հոսանքի դէմ հայերէն գիրք կարդացող չկայ. դպրոցը պէտք է օգնութեան գայ, մայրենի լեզուն և նրա գրականութիւնը գոնէ միւս խաւերի համար բարձր գնահատութեան մէջ պահելու համար։

Մեր դպրոցները թէ ինչպիսի խեղճուկ կերպով են քաշ տալիս իրենց գոյութիւնը, այս յայտնի է բոլորիս և դրա վրայ երկարելը այժմ միտք չունի։ Ներկայ պայմաններում նա մի կերպ քաշ է տալիս իր գոյութիւնը մշտապէս փակման վտանգի առաջ կանգնած լինելով. մօտիկ ապագայում մեր ընդհանուր պետական-հասարակական կեանքում մեծ փոփոխութիւններ են լինելու։ Կուլտուրական հարցը մեծ հոգացողութեան առարկայ է դառնալու մեր դպրոցներից Կովկասում շատանալու են այլ տիպի տարրական դպրոցներ ևս աւելի լաւ տնտեսական և իրաւական պայմանների մէջ. մենք պէտք է պատրաստ լինենք, որ յետ չմնանք և կարողանանք ժամանակի պահանջներին բաւարարելով մեր ծխական դպրոցների գոյութիւնը վտանգի չենթարկել։ Սա մի լուրջ ազգային մեծ խնդիր է, որի համար պէտք է նախօրօք մտածել և ոչ թէ յիմար կոյսերի պէս դէպքը պատահելուց յետոյ, երբ ամեն բան արդէն ձեռքից անցած կլինի։

Մի շատ կարդինալ հանգամանք յատկապէս ցոյց է տալիս «էջմիածնի դպրոցական ֆոնդ» ունենալու կարևորութիւնը։ Բոլորիս համար պարզ է, որ էջմիածինը մեր դպրոցների իրաւատէրն է. մեր բոլոր դպրոցները ենթարկւում են նրան. նրանից պէտք է սանկցիա ստանան բոլոր դպրոցական ձեռնարկութիւնները և նորութիւնները, նրան է պատկանում դպրոցների վերին հսկողութիւնը, նա է պատասխանատու մարմինը պետութեան առաջ։ Ուրեմն կենտրոնական մեր կառավարութիւն հայ դպրոցների համար. սակայն ինչի՞ նման կը լինի նրա կենտրոնական, կառավարչական դերը, երբ նա իր ողորմելի ծխական դպրոցներին և ոչ մի նպաստ չի տալիս։ Ինչի՞ նման է այն հանգամանքը, որ էջմիածնի ծխական դպրոցներին պէտք է նպաստներ տան բարեգործական զանազան հաստատութիւններ և ոչ ինքը էջմիածինը։ Վերջապէս ամօթ չէ, որ էջմիածինը մինչև այժմ չի ունեցել մի կենտրոնական դպրոցական կասսա, մի բան առանց որի անհասկանալի է կենտրոնական իշխանութիւն ասած գաղափարը։ Որտեղ է տեսնւած, որ վերին իշխանութիւնը նպաստներ չտայ դպրոցներին։ Ժողովրդին այդպիսի օգնութեամբ պէտք է կապել իր ծխական դպրոցների հետ, նա երբ իմանայ որ ամեն տարի գոնէ մի չնչին նպաստ է ստանում կենտրոնից, այն ժամանակ և այդ կենտրոնի կարգադրութիւնները և ցանկութիւններն աւելի սիրով կենթարկէ, մի բան, որը անհրաժեշտ է դպրոցները կառավարելու գործի համար։ Էջմիածինը մինչև այժմ չէ հասկացել իր կոչման այդ կողմը. մինչև օրս նա ծխական դպրոցներին մի չնչին կոպէկ անգամ չի տւել, իսկ երբ այժմ նա ցանկանում է ուղղել իր սխալը և գալիս է վերջապէս ուղիղ ճանապարհի, լինում են մարդիկ, որ քարկոծում են նրան, փոխանակ ուրախանալու և քաջալերելու։

Այդպիսի մի կասսայի գոյութիւնը էջմիածնի համար պատմական անհրաժեշտութիւն է. ուրախանանք, որ գոնէ այդ մեծ տօնի առթիւ վերջապէս նա զգացել իր անելիքներից ամենամեծը։ Աւելի յարմար առիթ դժւար թէ լինէր։

Կարող է առարկւել, թէ դրանով փչացւում է գրական ֆոնդի գործը, թէ այն ինչ պէտք է հաւաքւել էր՝ ներկայ պայմաններում աւելի քիչ կը հաւաքւէ։ Այդ կարող է ճիշտ լինել։ Գլխաւորը այն է, որ „գրական ֆոնդը" էջմիածնի նոր ձեռնարկութեամբ չոչնչանայ, իսկ այդ վտանգը բոլորովին գոյութիւն չունի. գրական ֆոնդը մնալու է և այդ գործը գլուխ գալու, որովհետև անհնար է երևակայել, թէ մեր ժողովրդի մի մասը նրան նպաստներ չտայ. օրինակ ես տալու եմ թէ այս ֆոնդին և թէ այն ֆոնդին իմ կարեցածի չափ. այսպէս վարւողների թիւը կարծում եմ հազարաւորների պէտք է հասնէ, լինելու են նաև այնպիսի անհատներ, որոնք միմիայն գրական ֆոնդին են տալու, այնպէս որ գրական ֆոնդը ստանալու է որոշ գումար, մեծ է լինելու այդ գումարը թէ փոքր այդ այժմ քննելու խնդիր չէ։ Էջմիածնի ֆոնդը գուցէ մի քանի հազարներ վնաս տայ իր գոյութեամբ գրական ֆոնդին, բայց մի քանի հազարների համար արժէ՞ դատապարտել էջմիածնի յանձնաժողովին, որ նա մի գեղեցիկ ձեռնարկութիւն է սկսել։

Իմ համոզումն այն է, որ այս մեծ տօնի առթիւ ոչ թէ շատ փող հաւաքելն է խնդիրը, այլ գեղեցիկ և բազմաթիւ գործեր ձեռնարկելը։ Կը ցանկայի նոյն իսկ, որ Բագուն, Մոսկւան, Նոր-Նախիջևանը ուրիշ ձեռնարկութիւններով յաւերժացնէին այդ մեծ տօները։ Թող ամեն տեղ իր տեղական ինեցիատիվով նոր գործեր կեանքի կոչի, իսկ այդ բոլոր մանր և աւելի տեղական գործերի միջից թող իրենց գլուխը բարձրացնեն երկու մեծ ընդհանուր ազգային ֆօնդերը «դպրոցականը» և «գրականը»։ Թող այս երկու ֆոնդերի վարիչները ձեռք ձեռքի տւած լրացնեն իրար գործունէութիւն։ Գլխաւորն այն է, որ հիմքը
դրւի, այնուհետև երկար տարի
ընթացքում պէտք է այդ ֆոն
հարստանան և իրենց ծաղկմանը
նեն, ճիշտ և ճիշտ Ներսիսեան
րոցի օրինակով։ Ձեռղանանք իրա
այլ հասկանանք իրար։ Էջմի
Յանձնաժողովը, խորն հաւատա
եմ, չի կարող „դպրոցական ֆօ
որոշումը յետ վերցնել. ես ևս,
այդ կազմակերպութեան անդամ,
մի կերպ չէի ցանկանալ վերա
դպրոցական ֆոնդի գաղափարը,
ինչ ժամանակի մասին զիջում ա
և համաձայնութեան գալը ան
ժեշտ է։ Ընդունենք այս դրութ
եղած, անփոփոխելի. կարող ենք
մտքի մէջ ցաւել, բայց հարկա
հաշտւել իրողութեան հետ և
վերացնելու ցանկութիւնը չունե
Եթէ ասւում է, որ էջմիածնի Յան
ժողովը պէտք է զգոյշ լինի պա
խանատւութեան ծանրութիւնից,
զգուշութիւնը պէտք է առաջնոր
լինի նաև միւս կազմակերպութ
ների համար։

Անհատապէս այն համոզմանն
որ մեր ժողովրդին ներկայումս ա
անհրաժեշտ է դպրոցական ֆո
քան գրականը, սակայն դէմ չենք
դպրոցականի կողքին միևնոյն
մանակ հիմք բռնէ նաև գրական
դը. թող երկուսն էլ լինեն և բա
ւաճեն։ Ահա այս մտքերով և
զգացումներով մօտենանք ազգ
այս մեծ տօների հանդէսներին։

Գ. Էդիլեա

ԹԻՖԼԻԶԻ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԳՐԱԴ
ՐԱՆԸ

Որքան մի ժողովրդի, մի
մտաւոր կեանքը յայտնում է,
քան էլ այդ կեանքի համար ան
ժեշտ պայմանները հրամայող
բնաւորութիւն են ստանում։ Ռ
հայ մտաւորականութիւնը, մա
վերջին տասնամեակում ակնյայտ
պով համեմատական լայն ծաւալ
ցաւ շնորհիւ մի շարք նոր եր
ների, որոնք երևան եկան հայ
կանութեան մէջ։

Թիֆլիզը ռուսահայերի մտա
կան կենտրոնն է, սրա մասին
կարծիք լինել չի կարող, բնակա
էլ Թիֆլիզը այդ մտաւորականու
հրամայողական պահանջներին
րարութիւն տւողը պէտք է լինի։

Մտաւորականութեան զէնքն ու
շարը գրականութիւնն է, և ո
նա հնարաւորութիւն ունի լայ
փով օգտւել այդ գրականութ
այնքան էլ գիտակցում է իր դե
կտարելիքի ծանրութիւնը և այ
էլ նա կանգնած է իր կոչման
րութեան վրայ։

Գրականութիւնը իր ժողովրդի
գի մտաւորականի աստիճանացո
հետևապէս այդ աստիճանացոյցի
թիւնն ու գիրքն էլ որոշում է
նով կերակրւողի պահանջը։